

«Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00059937 ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացին աջակցող միջգերատեսչական մշտական գործող աշխատանքային խմբի

ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ Ա. Հակոբյանի մոտ
2010թ. նոյեմբերի 19-ին ժամը 17:00-ին կայացած նիստի

Մասնակցում էին՝

Խմբի անդամներ՝ Ս. Սրապյանը, Օ. Կարապետյանը, Հ. Ծուղունյանը, Հ. Եսայանը, Հ.Աբրահամյանը, Ա. Կարապետյանը

Հրավիրվածներ՝

Ա. Մովսիսյանը, ՀՀ քաղաքաշինության նախարարի խորհրդական

Ե. Աթայանը, ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային ապահովման, բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ քաղաքականության վարչության պետ

Վ.Զալալյանը, Ծրագրի առաջադրանքի ղեկավար

Մ. Չառն, Ծրագրի միջազգային խորհրդատու

Ա.Վարդանյանը, “Շինսերտիֆիկատ” ՍՊԸ-ի տնօրեն

Հ. Հակոբյանը, “Էկոպեոլիտ” ՍՊԸ-ի տնօրեն

Մ. Համամյանը, “Մ և ՄԱՎԸ” ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

Ռ. Թադևոսյանը, “Գագոթերմ” ՍՊԸ-ի տնօրեն

Ռ. Արսենյանը, Էներգետիկայի ԳՀԻ-ի առաջատար գիտաշխատող

Գ.Թադևոսյանը, ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ԲԱԲՖԿ և ԿՔ վարչության բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ բաժնի գլխավոր մասնագետ

Մ.Խաչիկյանը, ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ԲԱԲՖԿ և ԿՔ վարչության բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ բաժնի առաջատար մասնագետ

Նիստի օրակարգը՝

"Էներգաարդյունավետ շինարարական նորմերի ու կանոնների և/կամ ստանդարտների մշակման և ընդունման առկա իրավանորմատիվային և ինստիտուցիոնալ դաշտի վերլուծություն" հաշվետվության ներկայացում:

Ելույթներ ունեցան՝

Ա. Կարդանյանը նշեց, որ ենթակապալառու կազմակերպության կողմից մշակված հաշվետվությունը ուղարկված է եղել աշխատանքային խմբի բոլոր անդամներին. սա միջանկյալ հաշվետվություն է, որը կազմված է ծրագրի տեխնիկական առաջադրանքի սահմաններում: Հաշվետվության մեջ ներկայացված է էներգաարդյունավետության վերաբերյալ առկա ՀՀ իրավական և նորմատիվ դաշտերի վերլուծությունը: Այսօր ՀՀ իրավական դաշտում մեծ բարեփոխումներ են սպասվում՝ արդեն մշակված են ստանդարտացման մասին և համապատասխանության գնահատման մասին նոր օրենքների նախագծերը, քաղաքաշինության մասին օրենքում նույնպես ակնկալվում են էական փոփոխություններ: Ակնհայտ է, որ շինարարության բնագավառում տեխնիկական նորմավորումը պահանջում է կարգավորում:

ՀՀ կառավարությունը այս տարվա մայիսին ընդունել է Հայեցակարգ, որը սահմանում է քաղաքաշինական փաստաթղթերի հետագա զարգացման ուղղությունները: Այն միանշանակ ուղղորդվում է եվրոպական նորմերով, ԵՄ-Հայաստան համաձայնագրից ելնելով: Այսօր Հայաստանի Հանրապետությունում հիմնականում գործում են նախկին Սովետական Միության

և այժմյան ԱՊՀ երկրների ՆՏՓ-ները: Նույն վիճակը տիրում է այսօր էներգաարդյունավետության բնագավառում: “Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների” ՀՀՇՆ, որը ընդունվել է 1995 թվականին և “Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների” ՇՆՁ, որը ընդունվել է 1998 թվականին, այսօր գործում են Հայաստանում և ունեն լիարժեք իրավական ուժ: “Շենքերի ջերմային պաշտպանություն” միջպետական շինարարական նորմերը, որոնց կողմ է քվեարկել ՀՀ-ն, այսօր չեն գործում, քանի որ “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքի պահանջներին համաձայն, չեն տեղայնացված:

Իրականացված վերլուծությունը նկարագրում է առկա իրավիճակը, որպեսզի ընտրությունը լինի ճիշտ և օգնի շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանը:

Հ. Օուղունյանը նշեց, որ ներկայում առկա է որոշակի հակասություն “Ստանդարտացման մասին” և “Իրավական ակտերի մասին” ՀՀ օրենքների միջև, կապված տեխնիկական կանոնակարգերի հետ: “Իրավական ակտերի մասին” օրենքով սահմանված է, որ նորմատիվ իրավական ակտի մեջ հղում կարելի է կատարել միայն նորմատիվ իրավական ակտի վրա: Մակայն ստանդարտները չեն հանդիսանում իրավական ակտեր, հետևաբար հղում կատարելու հնարավորություն չի լինում և պահանջվում է դրանք ներառել տեխնիկական կանոնակարգերում: Այդպիսով վերջիններս դառնում են մեծածավալ, որոնք հաճախ չեն կարդացվում: Հարկ է նշել, որ անհրաժեշտ է ապահովել “Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների” ՀՀՇՆ-ի կատարումը: Անհրաժեշտ է նաև քաղաքաշինական (ինչպես նաև այլ բնագավառների) նորմատիվատեխնիկական փաստաթղթերը համապատասխանեցնել հիմնական իրավական ակտերին: Հ.Օուղունյանի կարծիքով քաղաքաշինության բնագավառի օրենսդրությունը ևս պետք է գնա եվրոպական ճանապարհով:

Ա. Վարդանյանը նշեց, թե ինչով է տարբերվում այսօրվա “Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների” ՀՀՇՆ-ն և “Շենքերի ջերմային պաշտպանություն” միջպետական շինարարական նորմերը: Ներկայում գործող շինարարական նորմերը չեն սահմանում էներգետիկ անձնագիր հասկացողությունը: Անհրաժեշտ է, որ այդ հասկացողությունը անպայման ներդրվի:

Ա. Մովսիսյանը նշեց, որ առաջնահերթ անհրաժեշտ է խթանել ջերմամեկուսիչ շինանյութերի տեղական արտադրությունը: Ներկայումս դրանք հիմնականում ներմուծվում են դրսից և թանկ են: Շիննորմերի պահանջների խստացումը կբերի դրանց առավել թանկացման: Երկրորդը անհրաժեշտ է բարելավել նախագծերի փորձաքննության գործընթացը: Նա նաև նշեց, որ Հայաստանը պետք է այս ուղղությամբ առաջնորդվի ՌԴ-ի փորձով: Առաջարկեց բարելավել “Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների” ՀՀՇՆ-ն:

Օվ. Կարապետյանը լրացման կարգով նշեց, որ տեխնիկական կանոնակարգերը մշակվում են առևտրի բնագավառում խոչընդոտները վերացնելու նպատակով: Տեխնիկական կանոնակարգերը ունեն իրենց ուրույն ընթացակարգերը:

Այնուհետև խոսքը տրվեց միջազգային խորհրդատու **Մարկ Չանին**, որը ներկայացրեց նոր նորմերի ներդրման հետ կապված քայլերը: Մասնավորապես, առաջին քայլով առաջարկվում է ուժեղացնել գործող շինարարական նորմերի կատարումը/կիրարկումը, երկրորդ քայլով՝ խստացնել շենքերի ջերմային պաշտպանության պահանջները, երրորդ քայլով՝ ներդնել “Շենքերի ջերմային պաշտպանություն” միջպետական շինարարական նորմերը, չորրորդ քայլով՝ շինարարական նորմերում ներառել գերէներգաարդյունավետ հանձնարարելի նորմատիվային պահանջներ: Ավելացնելով նաև, որ նոր նորմատիվային պահանջների սահմանումը կպահանջի տնտեսական վերլուծություն:

Ռ. Արսենյանը նշեց, որ միջպետական շինարարական նորմերով պատող կոնստրուկցիաների ջերմային դիմադրության գործակիցները սահմանվել են ելնելով ջեռուցման սեզոնի աստիճան.օր ցուցանիշից: Բայց քանի որ ջերմային դիմադրության գործակիցը տնտեսական ցուցանիշ է, ապա այն կախված պետք է լինի վառելիքի արժեքից, մեկուսացման իրականացման արժեքից և այլ գործոններից: Մակայն այս ամենը հաշվի առնված չէ միջպետական շինարարական նորմերում:

Ս.Մրասյանը նշեց, որ Ծրագրի միջազգային խորհրդատուի՝ **Մարկ Չառի կողմից** ներկայացրված նոր նորմերի ներդրման հետ կապված քայլերը ընդունելի են և առաջարկեց ծրագրի առաջին բաղադրիչի շրջանակներում աշխատանքները կազմակերպել հետևյալ 3 փուլերով՝

1-ին փուլ – ուժեղացնել գործող “Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների” ՀՀՇՆ-ի պահանջների կիրառումը և դրա համար ստեղծել անհրաժեշտ իրավական դաշտ:

2-րդ փուլ – լրամշակել նշված ՀՀՇՆ-ը “Շենքերի ջերմային պաշտպանություն” միջպետական շինարարական նորմերի առավել առաջադեմ դրույթների համաձայն:

3-րդ փուլ – մշակել եվրոպական նորմերին համապատասխան նոր իրավական նորմատիվային փաստաթուղթ, դրանում ներառելով բացի պարտադիր կիրառման համար պահանջներից նաև հանձնարարելի բնույթ կրող՝ շենքերը էներգաարդյունավետության ավելի բարձր մակարդակին հասնելու ցուցանիշներ:

Դրա հետ մեկտեղ, առաջարկեց նաև ԱԽ-ով քննարկել ս.թ. նոյեմբերի 4-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված “Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագրի կատարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության գործողությունների ծրագիր”-ում ներառված գործողությունների իրականացման մասով Ծրագրի հետ համագործակցության հնարավոր եզրերը:

Վ. Ջալալյանը տեղեկացրեց, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության խնդրանքով ՄԱԶԾ-ի “Հայաստան - քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում” ծրագրի շրջանակներում 7 եվրոպական և միջազգային նորմատիվների թարգմանության և տեղայնացման հետ կապված աշխատանքներն արդեն ավարտված են: Նշված նյութերը կներկայացվեն նաև ՀՀ քաղաքաշինության նախարարությանը:

Քննարկման արդյունքներով որոշվեց առաջարկել Ծրագրին՝

1. Ծրագրի 1-ին բաղադրիչով նախատեսել՝

1) Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների” ՀՀՇՆ-ի կիրարկումն իստացնելու համար աջակցել անհրաժեշտ իրավական դաշտի ապահովմանը, ներառյալ օրենսդրական, իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու առաջարկների պատրաստում:

2) Աջակցել վերը նշված շինարարական նորմերի լրամշակմանն ու նորացմանը, որը կունենա պարտադիր և “համալիր մոտեցման” մասեր (համապատասխան ՄՇՆ “Շենքերի ջերմային պաշտպանություն”): Նորացված շինարարական նորմերով նախատեսել խթաններ ավելի բարձր նորմատիվ պահանջներ ապահովելու համար:

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Ա. Հակոբյան

Աշխատանքային խմբի քարտուղար՝

Ա. Կարապետյան